բակ Արքային, Բդեշխն, երեւելի այլազգիք քաղաքին, Քիրիլլոս Պատրիարքն Ցունաց իւր պարագայիւք, Յովհաննէս Պատրիարքն Հայոց Եպիսկոպոսօք և Վարդապետօք, եւ Յովսէփ Վալերկայ Լատին Պատրիարքն Հիւպատոսիւ Գաղղիոյ · ուր զկնի քաղաքական պատուոյ և յարգանաց՝ սկիզբն արարին խօսիլ 'ի վերայ ծանուցեալ խնդրոյ։ Յոյնք ոչ երբէք կամեցան զիջանիլ 'ի պահանջս Լատինաց· զի և հրովարտակ Արքային զնոյն հրամայէր, պատուիրելով չխախտել զիրս ինչ 'ի տեղւոջէ իւրմէ՝ և խանգարել զառաջին կարգն։ Այսպէս յետ ընդ երկար վիճելոյ, Աֆիֆ Պէյ գործադրեաց զհրաման Արքային թէ 'ի Ս· Յարութիւն և թէ 'ի Ս· Աստուածածին · մի միայն ետ բեւեռել 'ի տեղի Ծննդեան Քրիստոսի աստղանիշ ճաճանչն, զոր առաքեալ էր Սուլթան Մէհմետ Արքայն, և ետ նոցա զմի բանալի արտաքին դրան եկեղեցւոյն Բեթղեհէմի, բայց զերրաւունս բանալոյ եւ փակելոյ 'ի սահմանեալ ժամանակին եթող վերստին 'ի ձեռս Ցունաց, և յեկեղեցին որ և իցէ հոգեւոր պաշտօն կատարելոյ զիրաւունս ոչ ետ Լատինաց։ Մնաց միայն որոշումն կարգին, թէ ո՞յք 'ի Ս· Աստուածածին առաջին լիցին, ո՞յք միջին, և ո՞յք յետին 'ի պատարագել, որոյ վասն յետ երկուց աւուրց Աֆիֆ Պէյն, Դատաւորն և ամենայն անդամք քաղաքական ժողովոյն հանդերձ Պատրիարգօք երից ազգաց և Հիւպատոսիւ Գաղղիոյ իջին յապարանս Բդեշխին, ուր կազմեցաւ ժողով· անդ զկնի այլ և այլ բանից շուրջ զխնդրովք՝ առաջարկեաց Աֆիֆ Պէյն թէ՝ Բարձրագոյն հրովարտակի որոշումն ոչ այլ ինչ վախճան ունի, եթէ ոչ առաջին կարգն անխախտ մնալով՝ միայն Լատինք հանդերձ սպասուք պատարագի իւրեանց զկնի միւս ազգաց մտցեն յեկեղեցին մատուցանել զԱստուածածային պաշտօնն, և 'ի լրանալն՝ առեալ կրկին զամենայն կահս իւրեանց ելցեն արտաքս։ Լատինք ոչ երբէք յանձն առնուլ կամեցան մնալ յետին, եւս և խնդրեցին հաւասար Հայոց եւ Ցունաց ունել բանալի մի դրան տաճարին, որ վասն բազում ինչ խօսեցան Լատինք 'ի ժողովի անդ · և յետ երկար բանից՝ պատասխանի ընկալան թէ՝ «Պահանջք ձեր չիք յորոշման անդ»։ Յայնժամ կըրկնեաց Լատին Պատրիարքն և ասէ՝ «Եթէ Հայք եւ Ցոյնք